ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ՀԱՎԱՍԻԱԿԱՆ ԵՐԳԻ ՄՈԳԱԿԱՆ ՈՒԺՈՎ...



*Անցյալ շաբաթ օրը՝ սեպտեմբերի 6-ին, դարձյալ մարդաշատ ու տոնական էր Ծալկայի շրջանի Այազմա գյուղը... Հին ու հարուստ կենսագրություն ունեցող շենը վերստին մեծարում էր այդ հարստությունը կերտած իր մեծանուն զավակներից մեկին՝ գուսան Հավասուն.....*

Մեծարում էր մեծին վայել ճոխությամբ եւ համընդհանուր ու անպարփակ սիրով, ավանդական խոնարհումով՝ տեղացիների ու հյուրերի կողմից... Ու զմայլում էր բոլորին մշտավառ երգը այն բնիկ այազմացու, ում ծնողները՝ Էրզրումից գաղթած, եկել, բույն էին դրել այս փոքրիկ շենի վերին թաղերից մեկում ու տան մեծի՝ Պատոյենց Պարսամի գլխավորությամբ, երգ ու տաղին, խոսք ու գրին պատշաճ տեղ հատկացնելով, իրենց զավակների ու ամբողջ գյուղի մեջ սեր սերմանել ժողովրդական ու աշուղական երգի հանդեպ՝ իրենց օդայում մշտապես կազմակերպվող հավաքույթների շնորհիվ, ժամանակի հայ աշուղների մասնակցությամբ... Ահա այսպիսի արվեստաշունչ պայմաններում էլ ծնվել, հասակ է առել փոքրիկ Արմենակ Մարկոսյանը՝ նույն Պարսամի միակ արու զավակը... Երգի ու երաժշտության այնքա՜ն սիրահար, որ անգամ վաղ մանկությունից երկու աչքով կուրությունն էլ չի խանգարել նրան իր սքանչելի ու հոգեթով մեղեդիները արարելու, դրանցով հայ երգարվեստը հարստացնելու, հայ մարդու սիրտը գերելու ու ծննդավայրի անունը հարստացնելու նաեւ... Ու ոչ միայն երգեր արարելու, որոնց թիվն անցնում է երեք հազարի սահմանը... Մշտական բնակության տեղափոխվելով Երեւան՝ գրելու նաեւ բանաստեղծություններ, հեքիաթներ, պոեմներ, երգիծական պատումներ, արժանանալու մի շարք պատվաբեր կոչումների...

...Իսկ գյուղը... Իսկ ծննդավայրը երբեք չմոռացավ ու չի մոռանա իր սիրասուն զավակին... Ու ամեն տարի, սեպտեմբերի առաջին իսկ օրերին իր պատիվն ու հարգանքը կմատուցի նրան՝ խոսքի, երգի, ելույթների, հյուրասիրության ձեւով...

Հոծ բազմություն՝ տեղացիներ, հյուրեր, մտավորականներ՝ արվեստի, քաքական գործիչներ, պետական այրեր...

Միջոցառումն ավանդաբար բացեց Ծալկայի մունիցիպալիտետի առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի, սպորտի եւ կրթության բաժնի պետ Վարդո Եղոյանը:

Հավասու կյանքի ու ստեղծագործության մասին խոսք ասաց Ծալկայի սակրեբուլոյի պատգամավոր, Օզնի գյուղի հանրային դպրոցի երկարամյա տնօրեն Ռազմիկ Հանեսյանը: «Երգի ու հեքիաթի սիրահար Պարսամը որդու ապագան տեսավ աշուղության մեջ եւ ուշիմ ու երգասեր երեխային հանձնեց նախ հարեւան էդիքիլիսցի աշուղ Դովրանին, ապա եւ մեծանուն աշուղ, սազանդար Թիֆիլուն, որն էլ հենց միշտ Թիֆլիս էր տանում իր հետ պատանի Արմենակին,- ընդգծեց Հանեսյանը,- հենց այստեղ էլ՝ Թիֆլիսում, 17-18 տարեկան պատանուն նա շնորհում է աշուղի վկայական եւ քահանայի հեղինակավոր ստորագրությամբ շնորհում «Հավասի» պատվանունը»:

Ներկաներին սիրով ողջունեցին ու շնորհավորանքի խոսքերով հանդես եկան Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Ծալկայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Իլիա Լաբաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի գեղղեկ. Արմեն Բայանդուրյանը, նինոծմինդացի գրող, «Վերնատուն» միության անդամ Հմայակ Գրիգորյանը:

Հանդիսությին ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Իրակլի Գիգինեիշվիլին, նրա տեղակալ Գոչա Խաչատրյանը, Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբգեն վարդապետ Սալբիյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ, թբիլիսցի գործարար Ռաֆիկ Աղաջանյանը, «Հայարտան» տնօրեն Լեւոն Չիդիլյանը եւ ուրիշներ:

Ապա կայացավ համերգ, որին մասնակցեցին շրջանի եւ Թբիլիսիի երգի ու պարի համույթները:

***ԱՆԱՀԻՏ ՀԱՆԵՍՅԱՆ***
*Ծալկայի շրջան*

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

# «ՈՍԿԵ ԾԻՐԱՆԸ» ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

*«Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնն արդեն 7-րդ անգամ հյուրընկալվեց Ջավախեթիում: «Ոսկե ծիրանը անիվների վրա» ծրագրի շրջանակներում, սեպտեմբերի 8-10-ը Ախալքալաքիում ցուցադրվեցին կինոփառատոնի ֆիլմերի ընտրանին, ինչպես նաեւ Վրաստանի ազգային կինոկենտրոնի կողմից վերջին տարիներին ստեղծված լավագույն ֆիլմերը:*



Սեպտեմբերի 8-ին Ախալքալաքի «Ոսկե ծիրան» կինոդահլիճում տեղի ունեցավ փառատոնի հանդիսավոր բացման արարողությունը: Փառատոնի բացմանը Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբգեն վարդապետ Սալբիյանը իր շնորհակալական խոսքում բարձր գնահատեց «Ոսկե ծիրան» կինոփառատոնի անձնակազմին, որ արդեն 7-րդ անգամ կինոյի լավագույն փառատոնն անցկացնում են նաեւ Ջավախեթիում:

Փառատոնի նախագահ Հարություն Խաչատրյանն իր ողջույնի խոսքում կարեւորեց կինոյի դերն ու նշանակությունը մարդկանց կյանքում: «Ոսկե ծիրանը» Ջավախեթիում կինոփառատոնն իրականացվում է «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի, Հայաստանում Վրաստանի դեսպանության, Վրաստանի ազգային կինոկենտրոնի հետ համագործակցությամբ:

Բացման արարողությանը ներկա էին «Փյունիկ» հիմնադրամի պատվավոր նախագահ Լեւոն Սարգսյանը, գրականագետ Մերուժան Տեր-Գուլանյանը, վրաց մետրոպոլիտ Նիկոլոզ Փաչուաշվիլին եւ այլք:

Փառատոնի շրջանակներում, ջավախեթյան հանդիսատեսին տրվեց հայկական «Թեւանիկ» (ռեժ.՝ Ջիվան Ավետիսյան) եւ վրացական «Մանդարիններ» (ռեժ.՝ Զազա Ուռուշաձե) գեղարվեստական ֆիլմերը դիտելու հնարավորություն:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

# ԲՐԱՎՈ, ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

## ՊԻԵՍ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ԼԱՎ ԴԱՍ ԴԱՌՆԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ



*Ժամանակակից դրամատուրգ, երգիծաբան,Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Սամվել Խալաթյանի «Ճիչ» պիեսը արժանացել է ռեժիսորներից շատերի ուշադրությանը, ներկայացվել Վանաձորի Հովհ.Աբելյանի անվան, Գյումրիի՝ Վ.Աճեմյանի անվան, Երեւանի՝ Հայաստանի Թատերական գործիչների միության թատրոններում:*

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասան, Երեւանի Թատրոնի եւ կինոյի ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի ռեժիսուրայի բաժնի 4-րդ կուրսի ուսանող Գագիկ Մելքումյանի բեմադրությամբ պիեսը հանձնվեց նաեւ Թբիլիսիի հանդիսատեսի դատին: «Ճիչ» մոնոդրամայի թբիլիսյան պրեմիերան տեղի ունեցավ մայրաքաղաքի «Թավիսուփալի թատրոնում», սեպտեմբերի 6-ին:

- Սա իմ երկրորդ հանդիպումն է Սամվել Խալաթյան թատերագրի հետ, ով, խոստովանեմ, շատ հոգեհարազատ է ինձ,- ասում է Գ.Մելքումյանը:- Դա զգացի արդեն նրա «Համբառնալուց 40 օր հետո» պիեսը բեմադրելիս: Խալաթյանի գործերում ինձ գրավողը նախեւառաջ այսօրվա շունչն է, նրանցում մերօրյա կյանքի վառ արտացոլքը: Կոնկրետ այս պիեսն ընտրվել է ոչ պատահական. հերոսուհու ճիչը կուզենայի՝ սթափման, խոհեմության կոչ եւ կյանքի օգտակար դաս դառնար մեր երիտասարդ աղջիկների համար...

Մինչ ներկայացման սկսվելը, սրահում շշուկ տարածվեց՝ գլխավոր դերակատարը Հայաստանից է...

Հանդիսասրահը առանձնակի հետաքրքրությամբ եւ, ինչու չէ, առանձնահատուկի ու անսովորի սպասումով դիմավորեց անծանոթ դերասանուհուն՝ բեմադրության միակ կերպար Սոնային մարմնավորող Անուշ Գալստյանին:

Դրամատուրգը՝ Վանաձորից, բեմադրիչը՝ Թբիլիսիից, դերակատարը՝ Երեւանից: Այս միասնական ու դրանով հետաքրքիր նախագծի ծնունդն է բեմադրությունը, որի թեման մարդկության պես հին եւ, ցավոք, նրան բոլոր ժամանակներում ուղեկցող սովորական մի պատմություն է. ջահել աղջիկ, սեր, վստահություն, դառն հուսախաբություն, անառակ կյանքի ճահիճ, ամոթ ու զղջանք...

Մեկ ժամից ավելի տեւող մոնոդրամայի ընթացքում՝ հանդիսատեսը դարձավ 24-ամյա դերասանուհու ու նրա հերոսուհու սրտակից-մտերիմը, վերապրեց նրա ճակատագիրը՝ զայրացավ, դատապարտեց, մերժեց ու խղճաց...

Անուշ-Սոնան ոչ թե դեր խաղաց, այլ անձնավորեց հոգեբանություն:

Առերեսում՝ այրող ու ցավեցնող անցյալի հետ, հույզերի վառ տեղատարափ, հուզական ու դրամատիկ լարված վիճակ եւ... ցավից ծնված հույս:

Հոգեմաքրման այս ճանապարհը դերասանուհին անցավ արժանապատվորեն, նա հավատաց հերոսուհուն եւ հավատացրեց մեզ՝ իր հոգեաշխարհի համոզիչ մեկնաբանությամբ:

Տեղին է նշելը, որ Անուշ Գալստյանը Երեւանի Մնջախաղի թատրոնին կից ստուդիայի ուսանողուհի է: «Ճիչը» Անուշի դեբյուտն է դրամատիկական թատրոնում, խոսքային բեմարվեստում նրա առաջին դերը, ինչը, դատելով պահանջկոտ ու թատրոնից հասկացող թբիլիսյան հանդիսատեսի արձագանքից, հաջողությամբ պսակվեց: Անշուշտ, դրան խորապես օգնեց դերասանուհու՝ մնջախաղի արտահայտչալեզվին տիրապետելը, ըստ այդմ դրսեւորվող համոզիչ շարժումները, դիմախաղը, ժեստերը: Մնում էր միայն այդ ամենին սազական խոսքարվեստ, ինչը հնչեց համարյա ըստ պահանջվածի եւ համահունչ:

Բեմադրության նկարչական ու երաժշտական ձեւավորումների հեղինակներն են Գագիկ Մելքումյանն ու Իշխան Ղարիբյանը:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***
*Լուսանկարը՝*
***ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ***

ԻՐԱՎԱԿԱՆ

# ՍՏՈՒԳԱՅՃԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

*Սեպտեմբերի 8-ից Վրաստանի բնակավայրերի փողոցներում ՆԳ նախարարության կողմից իրականացվում է պարեկություն եւ ստուգայցեր:*

Պարեկության եւ ստուգայցերին նախորդել էր ազգային շարժման կողմից Վրաստանի ՆԳ նախարարության եւ, մասնավորապես, նախարար Ալեքսանդր Ճիկաիձեի հասցեին քննադատությունը: Ընդդիմադիրների խոսքերով, երկրում կտրուկ աճել է իրավախախտումների թիվը, ինչը իրավապահ մարմինների անգործունակության արդյունքն է:

Երկրում սպանությունների թվի ավելացման մասին հայտարարեց նաեւ ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին՝ նշելով, որ վերջին ժամանակներս ծանր հանցագործությունների համար դատարանը թեթեւ պատժամիջոցներ է նախընտրում:

Մեկնաբանելով վերջին ժամանակներս տեղի ունեցած սպանությունները՝ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ երկրում քրեական իրավիճակը կայուն է, նաեւ նշեց, որ իշխանությունները լրիվությամբ վերահսկում են իրավիճակը: Ինչ վերաբերում է փողոցներում տարվող պարեկությանն ու ստուգայցերին, ապա ինչպես տեղեկացրին ՆԳ նախարարությունում, դա իրականացվում է «Ոստիկանության մասին»



օրենքի շրջանակներում: Նշվեց, որ սույն օրենքը կարգավորում է նաեւ իրավապահների իրավունքները: Վերոնշյալ օրենքի համաձայն, ոստիկանները իրավասու են հարցաքննել անձին, կատարել մակերեսային խուզարկություն, թեպետ միաժամանակ չպետք է խախտվեն մարդու իրավունքները, եւ անթույլատրելի են ծեծն ու անմարդկային վերաբերմունքը: Կասկածի ծագման դեպքում, ոստիկաններին տրված է նաեւ տրանսպորտի միջոցները ստուգելու իրավունք: Բացի այդ, նրանք ունեն վարչական ստուգման, ինչպես նաեւ վարչական ձերբակալության իրավունք, եթե դրա համար կան էական հիմնավորումներ:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

ì²ðìºÈ²Î ºðä

## ՊԵՏՔ Է ՃԻՇՏ ՈՒՏԵԼ



***Բժիշկները հաճախ խորհուրդ են տալիս՝ ճիշտ սնվել: Իսկ ի՞նչ է նշանակում «ճիշտ սնվելը», ոչինչ չեն ասում կամ մառախլապատ բացատրություններ են տալիս:***

***Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ***

***Ախալքալաքի***

Մեր օրերին բնորոշ է ամեն ինչում շտապողականություն դրսեւորելը: Մենք հապճեպ շփվում ենք, վազքի մեջ գործերն ավարտում, ձեռքի հետ ընկերություն անում եւ, իհարկե, ընթացքում էլ հասցնում մեր քաղցը հագեցնել: Հիմա կյանքն է այդպիսին:

Բայց հիշեք, որ այն մարդիկ, ովքեր հոգում են առողջության մասին եւ ցանկանում են բարեկազմ լինել, պետք է ուտելիս մոռանան շտապելու մասին:

Ճապոնացի գիտնականների անցկացրած հետազոտություններից պարզ է դարձել, որ արագ ուտելը նպաստում է ճարպակալմանը: Այլ կերպ ասած, ավելի կարեւոր է ոչ թե այն, թե ինչ ենք ուտում, չնայած դա նույնպես վիճելի հարց է, այլ այն, թե ինչպես ենք ուտում: Ուտելիքն արագ կուլ տվողները 84 տոկոսով ավելի են հակված գիրանալու, քան նրանք, ովքեր դանդաղ են վայելում այն:

ÐÆØÜ²ÊÜ¸Æð

## ԽՌՄՓՈՑ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



***Գիշերները խռմփացնում եմ եւ ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել դրանից: Նույնիսկ անհարմար է: Այդ պատճառով խուսափում եմ տանից հեռու վայրեր հյուր գնալ, քանի որ ստիպված եմ լինում գիշերել այնտեղ: Չգիտեմ՝ ինչպե՞ս վարվել: Գույե օգնե՞ք:***

***Մ.Վ.***

***Թբիլիսի***

Պատճառները տարբեր են լինում: Հիմնականում մարդիկ խռմփացնում են, որ ըմպանի հատվածում սեղմվում կամ արգելափակվում են շնչուղիները, օրինակ՝ քթի միջնորմի ծռվածության պատճառով: Երբեմն նույնիսկ դրա պատճառը կարող է լինել ստորին ծնոտի սխալ դիրքը: Խռմփոց կարող է առաջանալ ալերգիայի, ավելորդ քաշի, ինչպես նաեւ ալկոհոլի եւ ծխախոտի չարաշահման դեպքում: Մի խոսքով, խռմփոցի պատճառները բազմաթիվ են, իսկ թե դրանցից ո՞րն է ձեր պարագայում, կարող է որոշել միայն բժիշկը:

Թոքերին սահմանափակ քանակով օդի մատակարարման պատճառով քունն ընդհատումներով եւ անհանգիստ է լինում: Առավոտն էլ, այդպիսի դեպքերում, բարի չի բացվում, քանի որ ողջ գիշեր խռմփացրած մարդն առավոտյան հոգնած ու տանջված է արթնանում: Թթվածնի թեկուզ աննշան անբավարարությունը նաեւ սթրեսի է հանգեցնում: Խռմփոցի պատճառով գիշերվա ընթացքում շնչառությունը կարող է ավելի քան 10 վայրկյանով ընդհատվել, իսկ դա արդեն մահացու վտանգ է պարունակում:

Կարելի է դրա դեմ պայքարել հատուկ մարմնամարզության օգնությամբ, եթե դա անեք մշտապես: Վարժությունները բավականին պարզ են:

Առավելագույն չափով պետք է լեզուն դուրս հանել եւ ներքեւ իջեցնել: Այդպես ձգված վիճակում պահել 1-2 վայրկյան: Կրկնել վարժությունը 30 անգամ՝ առավոտյան եւ երեկոյան:

Ձեռքով սեղմել ծնոտը եւ ստորին ծնոտը ուժով առաջ ու հետ շարժել:

Կարատել 30 անգամ՝ առավոտյան եւ երեկոյան:

Ատամներով ուժեղ սեղմած 3-4 րոպե պահել փայտե կամ պլաստմասե որեւէ ձող: Կատարել քնելուց առաջ:

Այնուամենայնիվ, կյանքը չվտանգելու համար պետք է դիմել բժշկի: Գուցե անհրաժեշտ է վիրաբուժական միջամտությո՞ւն:

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՄԵՂՎԻ ԽԱՅԹՈՑԻ ԴԵՊՔՈՒՄ

***Մեղվի խայթոցի դեմ հրաշալի, բայց ոչ այնքան հայտնի միջոց է ամենասովորական լոդակը: Փուշը հանելուց հետո, կծած տեղը պետք է մի քանի ժամվա ընթացքում մի քանի անգամ թրջել լոդակի թույլ լուծույթով: Այդպիսով լիովին վերանում է այտուցի առաջացման վտանգը:***



Ժողովրդական լավ միջոց են համարվում հազարանտերեւուկի եւ եզնլեզվի թարմ թերթիկները: Դրանք պետք է սառը ջրով լվանալ, մանրացնել, վիրակապի մեջ փաթաթել եւ դնել կծած տեղում: Գործողությունը պետք է 2 ժամ հետո կրկնել:

Մեղվի խայթած տեղին կարելի է ձիթապտղի սառը ձեթ քսել, բորբոքված տեղին դափնու թարմ տերեւ կամ քերած սոխ դնել:

Հակաբորբոքային ազդեցություն ունի նաեւ հալվեն: Դրա տերեւները պետք է լվանալ, մակերեսից հանել վերին շերտը եւ դնել կծած տեղին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԱԽԱՇԵՄԻՆ

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՓՈՔՐԻԿԸ ԴՊՐՈՑ ԳՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ



***Մոտենում է սեպտեմբերի 15-ը, եւ հազարավոր հայ փոքրիկներ պատրաստվում են առաջին անգամ դպրոց մուտք գործել: Սա ոչ միայն չափազանց պատասխանատու քայլ է երեխաների համար, այլեւ նրանց ծնողների: Մայրիկներն ու հայրիկները երբեմն ավելի շատ են հուզվում, եւ նրանց թվում է, թե ինչ-որ բան, հենց՝ ամենակարեւորը, իրենք մոռացել են: Եկեք միասին, քայլ առ քայլ պատրաստվենք դպրոցին: Նախ տեսնենք, թե ինչ պետք է իմանա փոքրիկը դպրոց գնալու համար: Եթե նա կարող է պատասխանել այս հարցերին եւ կատարել նշված գործողությունները, ապա կարող եք վստահ լինել, որ նա հրաշալի պատրաստված է դպրոցի համար, իսկ մնացած ամեն ինչ նա կսովորի հենց այնտեղ: Եվ այսպես.***

**Հարցեր, որոնց պետք է պատասխանի երեխան**

❑ Քանի՞ տարեկան ես:

❑ Ի՞նչ է ծնողներիդ, տատիկիդ եւ պապիկիդ անունները:

❑ Ունե՞ս արդյոք քույրիկ կամ եղբայր: Քանի՞ տարեկան են նրանք: Ինչքա՞ն են մեծ կամ փոքր քեզանից:

❑ Որտե՞ղ են աշխատում ծնողներդ («Հայրիկը աշխատում է աշխատանքի վայրում, իսկ մայրիկը տանն է նստած»,- այս պատասխանը չի ընդունվում):

❑ Որտե՞ղ ես բնակվում (ամբողջական հասցեն, քաղաքը, երկիրը):

❑ Ի՞նչ երկրներ եւ քաղաքներ գիտես (2-3 օրինակ):

❑ Ինչպե՞ս է կոչվում մեր մոլորակը: Գիտե՞ս այլ մոլորակների անուններ:

❑ Ի՞նչ կենդանիներ գիտես:

❑ Ի՞նչ բույսեր գիտես:

❑ Ինչո՞վ ես սիրում զբաղվել:

❑ Ի՞նչ մանկական գրողների ես ճանաչում:

❑ Ունե՞ս սիրելի գիրք: Ինչի՞ մասին է այն:

❑ Ուզո՞ւմ ես դպրոց հաճախել եւ ինչո՞ւ:

**Գործողություններ, որոնք պետք է կարողանա անել երեխան**

❑ Արտասանել մայրենի լեզվի բոլոր հնչյունները:

❑ Արտասանել հնչյունները՝ ե'ւ բառասկզբում, ե'ւ բառավերջում:

❑ Նախադասություն կազմել, ճիշտ օգտագործել նախածանցներն ու վերջածանցները:

❑ Կարողանալ հարցեր տալ եւ պատասխանել հարցերի, ազատ արտահայտել մտքերը:

❑ Նկարների հիման վրա պատմություն կառուցել:

❑ Վերապատմել փոքրիկ գեղարվեստական ստեղծագործություններ:

❑ Հաշվել 0-ից 10-ը եւ հակառակը:

❑ Կարողանալ հաշվել առարկաները:

❑ Նշել թվի նախորդ եւ հաջորդ թվերը:

❑ Կարողանալ գումարել եւ հանել 1-10 թվերը:

❑ Ճանաչել երկրաչափական հիմնական պատկերները. շրջան, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն:

❑ Ճիշտ բռնել գրիչը, մատիտը, վրձինը:

❑ Կողմնորոշվել տարածության մեջ՝ աջ, ձախ, վերեւ, ներքեւ եւ այլն:

❑ Իմանալ շաբաթվա օրերը, ամիսները, տարվա եղանակները:

❑ Հասկանալ «այսօր», «վաղը», «երեկ» բառերի իմաստները:

ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՇԽԱՐՀ

## ՏԱՏԸ՝ ԹՈՌԱՆ ՄԱՅՐ



***Ամերիկացի կենսաթոշակառուհի, ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի բնակչուհի Քրիստին Կեյսը ծննդաբերել է հարազատ թոռնուհուն:***

61 տարեկան կինը երեխային ծննդաբերել է իր դստեր՝ Սառա Կոննելի համար, ով մի քանի անգամ անհաջող հղիություն է ունեցել: Երեխայի ծննդաբերումով Քրիստին Կեյսը դարձել է ոչ միայն ամենատարեց ծննդկանը, այլեւ միակն է աշխարհում, որը դարձել է իր հարազատ դստեր սուրոգատ մայրը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Գրականությունը մի տաճար է, ուր կարելի է մտնել միայն մաքուր խղճով ու ազնիվ միտումներով: Իսկ երբ մարդիկ մոտենում են այդ տաճարին մանր փառասիրական տենչերով, շահադիտական նպատակներով, ամենամեծ ոճրագործությունն է, որ կատարում են ժողովրդի դեմ:

***ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ***
***(1878-1918)***
***Կուսակցական գործիչ***

Ում դեմ մեղք եմ գործել, նրանք թող ինձ ներեն, անհիշաչար լինեն, հիշեն խոսքով բարի:

***ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ***
***(1705-1791)***
***Վրաց բանաստեղծ***

Մենք ամենից հաճախ երջանկություն ենք կոչում այն, ինչ ինքներս չենք փորձել:

***ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ***
***(1844-1924)***
***Ֆրանսիացի գրող***

Առողջությունն ինքնին հաճույք է կամ դրանից անմիջականորեն հաճույք է առաջանում՝ ինչպես կրակից տաքություն:

***Թ.ՄՈՐ***
***(1478-1535)***
***Անգլիացի քաղաքական գործիչ***

Իմաստունը վիրավորանքների վրա ուշադրություն չի դարձնում:

***ԴԻՈԳԵՆԵՍ***
***(մ.թ.ա.412-մ.թ.ա.323)***
***Հին հույն փիլիսոփա***

Մեր ուժերն ավելի շատ սպառվում են պատանեկության տարիների բուռն կյանքի հետեւանքներից, քան տարիների քայքայիչ ազդեցությունից: Անզուսպ եւ կրքոտ երիտասարդությունը ծերությանը մաշված մարմին է հանձնում:

***ՑԻՑԵՐՈՆ***
***(մ.թ.ա.106-մ.թ.ա.43)***
***Հին հռոմեական քաղաքական գործիչ***

Եթե դու ոչ մի կերպ ժամանակ չես գտնում հանգստանալու համար, շատ շուտով ստիպված կլինես ժամանակ գտնել բուժման համար:

***ԱՐԿԱԴԻ ԱՎԱԳՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Ü º Î ¸ à Î Ü º ð

** Իդեալական կանայք շախմատիստուհիներն են. նրանք կարող են ժամերով լռել, լավ են հետեւում ֆիգուրաներին եւ գիտեն շատ հետաքրքիր դիրքեր:*

** - Ինչպե՞ս է քեզ հաջողվում տրամադրությունդ չգցել:*

*- Իսկ ինչո՞ւ տրամադրությունս գցեմ: Առաստաղին գրել եմ ու ամեն օր առավոտյան կարդում եմ. «Այսօր ամեն ինչ վատ է: Վաղն ավելի վատ կլինի»: Նշանակում է՝ այսօր պետք է ուրախանալ, որ ամեն ինչ այնքան վատ չէ, որքան կլինի վաղը:*

** - Մի քեզ նայիր: Արդեն քանի տարի իմ հաշվին ես ապրում, իմ բնակարանում, ես, քեզնից անգամ լումա չստանալով, քեզ կերակրում եմ, հագցնում, լողացնում, էլ չասած այն մասին, որ քնում եմ քեզ հետ:*

*- Եվ դու ինձ դեռ համարում ես անհաջողա՞կ:*

** Կինը՝ շեմքին.*

*- Դու որտե՞ղ էիր:*

*- Կինոյում: Եվ մինչեւ վերջ պաշտպանելու եմ այդ վարկածը:*

** - Ես հարուստ տղամարդ չեմ փնտրում, ես փնտրում եմ այնպիսի տղամարդ, ով կհասկանա իմ հոգին:*

*- Իսկ եթե ավելի կոնկրե՞տ:*

*- Ով կարտոֆիլ կկլպեր եւ կլվանար ամանեղենը...*

** - Աստված իմ, ես ցանկանում եմ հաստ քսակ եւ բարակ մեջք: Եվ խնդրում եմ՝ չշփոթես՝ ինչպես նախորդ անգամ:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԸՆԴԳԾՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



*Սեպտեմբերի 6-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Ֆրանսիայի Ազգային ժողովի Սոցիալիստական խմբակցության նախագահ Բրյունո լը Ռուի գլխավորած պատվիրակությանը:*

Զրուցակիցները համակարծիք են եղել, որ ս.թ. մայիսին Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան նոր թափ է հաղորդել հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերություններին:

Բրյունո լը Ռուն ընդգծել է, որ իր գլխավորած պատվիրակության այցը մեծ հայասեր Ժան Ժորեսի մահվան 100-րդ տարելիցի ոգեկոչման միջոցառումների շրջանակներում լավ առիթ է ավելի խորացնելու Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ բարեկամությունը, որի ջատագովն էր Ժորեսը:

Հանդիպման ժամանակ երկուստեք կարեւորվել են նաեւ ֆրանսիացի օրենսդիրների այցելությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն եւ «Ֆրանսիա-Լեռնային Ղարաբաղ» բարեկամության շրջանակի ստեղծումը:



## ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

*Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի մոտ մեկնարկել են Հայաստանի 2015 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկումները:*

Հայաստանի գործադիր մարմինների ղեկավարները մեկ շաբաթվա ընթացքում կներկայացնեն առաջարկություններ «ՀՀ 2015թ. պետբյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի տեքստային մասի նախնական տարբերակի վերաբերյալ: Ըստ ընթացակարգի, վարչապետի մոտ տեղի են ունենում նախնական տարբերակի քննարկումներ բոլոր գերատեսչությունների հետ, ինչի արդյունքում, ամբողջական տեսքի է բերվելու բյուջեի նախագիծը եւ ներկայացվելու է Ազգային ժողովին:

## Բ. ՕԲԱՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՐԱՄ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՅԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ



*ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման սեպտեմբերի 11-ին ընդունել է Մերձավոր Արեւելքի հայկական եկեղեցու, ասորական, ուղղափառ, հունական եւ սիրիական կաթոլիկ եկեղեցու, մարոնիների ներկայացուցիչներին: Հանդիպմանը մասնակցել է Հայ Առաքելական եկեղեցու Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը:*

Դիմելով ԱՄՆ նախագահին՝ Արամ Առաջինը առաջին հերթին ցավակցություն հայտնեց սեպտեմբերի 11-ի ահաբեկչության 13-րդ տարելիցի առթիվ:

Խոսելով Մերձավոր Արեւելքի քրիստոնյաների մասին՝ Արամ Առաջինը նշեց, որ քրիստոնյաներն օտար չեն տարածաշրջանում եւ չպետք է երկրորդ կարգի քաղաքացի համարվեն, քանի որ նրանց պատմությունը խոր արմատներով գնում է դեպի Մերձավոր Արեւելքի պատմություն: Արամ Ա-ն ողջունել է նախագահ Օբամայի հայտարարությունը համատեղ ջանքերով ծայրահեղական շարժումներն արմատախիլ անելու վերաբերյալ:

ԱՄՆ նախագահն, իր հերթին, ներկայացրել է իր հայտարարության առանցքային կետերը՝ ընդգծելով, որ խղճի ազատությունը եւ մարդու իրավունքների պաշտպանությունը շարունակում են մնալ ԱՄՆ արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունները:



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՉԻ ԽԱՆԳԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԻՆ

*Եվրասիական ինտեգրումը խնդիրներ չի առաջացնի Վրաստանի հետ Հայաստանի առեւտրային հարցերում:*

Այս մասին սեպտեմբերի 10-ին հայտարարեց Հայաստանի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը: Նա հավելեց նաեւ, որ առեւտրում այժմյան ստատուս-քվոյի պահպանումը բխում է նաեւ հենց Վրաստանի շահերից:

«Մեր տնտեսական կապերը հարկավոր են ոչ միայն մեզ, այլեւ Վրաստանին: Եվ նրանք շահագրգռված են, որ մեզ հետ առեւտրային հարաբերություններ ունեցող իրենց սուբյեկտները խոչընդոտների չհանդիպեն ու հանգիստ վաստակեն»,- նշեց նախարարը:

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՏՐԱՄԱԴՐԻ 140-170 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

*ԵՄ անդամների, գործընկեր երկրների ու Եվրախորհրդարանի հետ խորհրդատվությունից հետո, Եվրոպական հանձնաժողովը որոշում է ընդունել առաջիկա տարիների ընթացքում ֆինանսավորել գործընկերներին՝ Հարեւանության եվրոպական քաղաքականության շրջանակներում:*

Փաթեթը ներառում է ծրագրային փաստաթղթեր Ալժիրի, Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Հորդանանի, Լիբանանի, Մարոկկոյի, Թունիսի, ինչպես նաեւ արեւելյան ու հարավային հարեւանների տարածաշրջանային համագործակցության համար: Ծրագրի ընդհանուր ծավալը կազմում է ավելի քան 5,5 մլրդ եվրո:

Հայաստանի համար 2014-2017 թթ. ընթացքում 140-170 մլն եվրո կտրամադրվի հետեւյալ ոլորտների համար՝ մասնավոր հատվածի զարգացում, պետական կառավարման եւ արդարադատության համակարգի բարեփոխում:

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ 95 ՏԱՐԵԿԱՆ

*Սեպտեմբերի 10-ին Հայաստանի նախագահ, ԵՊՀ խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը Երեւանի պետական համալսարանում մասնակցել է ԵՊՀ պատմության եւ հայ բանասիրության ֆակուլտետների հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին:*

Սերժ Սարգսյանը նախ այցելել է հայ բանասիրության ֆակուլտետ, դիտել հոբելյանին նվիրված ցուցահանդեսը, զրուցել պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողության հետ: Այնուհետեւ, նախագահը ԵՊՀ գլխավոր մասնաշենքում մասնակցել է համալսարանի վերոնշյալ ֆակուլտետների հիմնադրման 95-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին: Երեւանի պետական համալսարանի հայ բանասիրության եւ պատմության ֆակուլտետների հիմնադրման 95-ամյակի կապակցությամբ, գիտության եւ կրթության բնագավառների զարգացման գործում ներդրած ավանդի, երկարամյա եւ արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրերով բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մի խումբ ներկայացուցիչներ պարգեւատրվել են ՀՀ պետական պարգեւներով եւ ՀՀ Նախագահի շնորհակալագրերով:

## ՊԱՏԱՐԱԳ՝ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՂԹԱՄԱՐ ԿՂԶՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ հայկական եկեղեցում հինգերորդ անգամ պատարագ է մատուցվել:*

Պատարագն անցկացվել է Թուրքիայի քրիստոնյաների մասնակցությամբ: Առաջին անգամ պատարագին միացել են Թուրքիայի հույների պատրիարք Բարդուղիմեոսը եւ Թուրքիայի ասորի համայնքի հոգեւոր առաջնորդ Յուսուֆ Չեթինը: Արարողությունն անց է կացրել Թուրքիայում հայոց պատրիարքարանի ղեկավարի պաշտոնակատար Արամ Աթեշյանը:

Աթեշյանը նշել է, որ այս անգամ աղոթել են նրանց համար, ովքեր զոհվել են պատերազմներում, հատկապես՝ մերձավորարեւելյան: Ուղերձը «խաղաղությունն է երկրում եւ աշխարհում»: Մոտ 100 տարվա լքվածությունից հետո, եկեղեցին սկսել էր գործել 2010-ին: Թուրքիայի իշխանություններն այն վերանորոգել էին 2005-2007 թթ.՝ նախքան դա որպես թանգարան բացելը:

### ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

***Քաղաքական թեժ աշնան ակնկալիքներով եւ հագեցած օրակարգով մեկնարկեց հինգերորդ գումարման Ազգային ժողովի վեցերորդ՝ աշնանային նստաշրջանը: Այս վեցերորդ նստաշրջանի օրակարգի մասին որոշման նախագծում ընդգրկվել են 145 հարց եւ միջազգային 25 պայմանագիր:***

### ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ԹԵԹԵՎԱՑՎՈՒՄ Է

***Հայաստանի Ազգային ժողովն անցած նստաշրջանի ընթացքում օրենքի նախագիծ է ընդունել, որի համաձայն, փոքր բիզնեսի համար շրջանառության հարկը 3,5 տոկոսից նվազում է՝ դառնալով 1,5 տոկոս: Բացի այդ, օրենսդրական մեկ այլ նախաձեռնությամբ, կառավարությունը սահմանեց «ընտանեկան բիզնես» հասկացությունը եւ ընտանեկան բիզնեսին հարկային արտոնություններ տրամադրելու առաջարկ ներկայացրեց ՀՀ Ազգային ժողովին: Հարկային նոր ռեժիմն ուժի մեջ կմտնի հոկտեմբերի 1-ից:***

### ISAF-ՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

***Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպան Քեթրին Լիչը դեսպանության բլոգում անդրադարձել է ՆԱՏՕ-ի Ուելսում տեղի ունեցած գագաթաժողովին՝ բարձր գնահատելով Հայաստանի ներդրումը Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցության ուժերի (ISAF) գործողություններում եւ կարեւորելով Հայաստանի հետ համագործակցության հետագա ամրապնդումը: «Հայաստանը ՀԱՊԿ-ի անդամ այն երկրներից մեկն է, որ վերջին տասը տարում բացառիկ կերպով հավատարիմ է եղել Կոսովոյում եւ Աֆղանստանում խաղաղապահ առաքելություններին մասնակցելու պարտավորությանը: Հայաստանի ներկայիս ներդրումը ISAF-ում ավելի մեծ է, քան ՆԱՏՕ-ի որոշ դաշնակիցներինը, եւ միայն աննշան կերպով է զիջում Ֆրանսիայի ունեցած ներդրմանը: Մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել»,- նշել է դեսպան Լիչը՝ հավելելով, որ իրենք ցանկանում են ամրապնդել համագործակցությունը ՆԱՏՕ-ի ամենաարժեքավոր գործընկերների, այդ թվում՝ Հայաստանի հետ:***

### ՄԵԿՆԱՐԿԵՑ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

***Հայաստանի Գեղարքունիքի մարզի որոշ տնտեսություններում արդեն մի քանի օր է, ինչ սկսվել է կարտոֆիլի բերքահավաքը: Հիմնականում բերքահավաքն ընթանում է վաղահաս կարտոֆիլի ցանքերում: Սեպտեմբերի 10-ի դրությամբ, արդեն քանդվել է մոտ 1200 հեկտար կարտոֆիլի դաշտ, որի մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 250-300 ցենտներ: Առայժմ ստացված վաղահաս կարտոֆիլի բերքն իրացվում է ներքին շուկայում: Կանխատեսվում է բարձր բերքատվություն՝ մեկ հեկտարից մինչեւ 300 ցենտներ ցուցանիշով: Ներքին շուկայի պահանջները բավարարելուց զատ, արտադրված պարենային կարտոֆիլի մեծ խմբաքանակների արտահանման համար ձեռք է բերվել համապատասխան պայմանավորվածություն Իրանի, Վրաստանի եւ Ռուսաստանի մթերող կազմակերպությունների հետ: Արվում է հնարավորը, որպեսզի կարտոֆիլի իրացման համար ստեղծվեն ամենանպաստավոր պայմանները:***

### ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԸ՝ 124 ՏԱՐԵԿԱՆ

***Հրեական ծագումով ավստրիացի դրամատուրգ եւ նովելիստ Ֆրանց Վերֆելը, ով իր հեղինակած եւ Հայոց ցեղասպանության մասին պատմող «Մուսա լեռան 40 օրը» աշխատությամբ կարծես նախազգուշացնում էր աշխարհին ծագող նացիստական վտանգի մասին, սեպտեմբերի 10-ին դարձավ 124 տարեկան: Իսրայելական Haaretz պարբերականը «Այս օրը հրեական պատմության մեջ» խորագրի ներքո հատուկ հոդված է հրապարակել՝ նվիրված հեղինակի կյանքին եւ գործունեությանը: Հոդվածում հատուկ տեղ է հատկացված «Մուսա լեռան 40 օրը» աշխատությանը: Պարբերականը պատահական չի համարում այն, որ «Մուսա լեռան 40 օրը» գիրքն առաջիններից էր, որ ֆաշիստներն այրեցին խարույկների վրա: Ֆրանց Վերֆելը մահացավ 1945 թվականի օգոստոսի 26-ին, 54 տարեկանում:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՕԳՈՍՏՈՍ

*14.09.2014. Խաչվերաց*



Խաչվերացը հայոց եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Հայ եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը: Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

Ժողովուրդը Խաչվերացին կատարում է անթիվ ուխտագնացություններ: Որոշ բնակավայրերում մարդիկ իրենց ձեռքերով խաչեր են պատրաստում եւ զարդարում գույնզգույն ծաղիկներով, հատկապես՝ ռեհանով: Ժողովուրդը ռեհանն է համարում խաչի ծաղիկ:

Ընդհանուր առմամբ, Խաչվերացը կամ «Սըրբխեչը» աշնան սկիզբը խորհրդանշող ուրախ տոն է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ, կատարվում հոգեհանգստյան կարգ, որից հետո մարդիկ այցելում են հանգուցյալների շիրիմներին:

## ՖՈՒԲՈԼ

### ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՄ

Եվրոպայի խաղադաշտերում մեկնարկեցին «Եվրո-2016» ընտրական փուլի հանդիպումները:

Ընտրական փուլում ինը ենթախմբերի բաժանված եվրոպական թիմերը պայքարում են 2016 թվականին Ֆրանսիայում անցկացվելիք եվրոպայի առաջնության ուղեգրերի համար:

«D» ենթախմբում Վրաստանի մրցակիցներն են Գերմանիայի, Լեհաստանի, Իռլանդիայի, Շոտլանդիայի եւ Ջիբլարթարի հավաքականները: «I» ենթախմբում հանդես եկող Հայաստանի հավաքականի մրցակիցներն են Դանիայի, Պորտուգալիայի, Սերբիայի եւ Ալբանիայի թիմերը:

Վրաստանի ազգային ընտրանին ընտրական փուլի անդրանիկ հանդիպումը անցկացրեց իր մարզադաշտում եւ 1:2 հաշվով զիջեց Իռլանդիայի հավաքականին: Պարտություն կրեց նաեւՀայաստանի հավաքականը, որը Կոպենհագենում 1:2 հաշվով զիջեց Դանիայի թիմին:

Վրաստանի հավաքականի հաջորդ հանդիպումը կկայանա հոկտեմբերի 11-ին, Գլազգոյում, Շոտլանդիայի հավաքականի դեմ, իսկ հոկտեմբերին 14-ին մրցակցի դաշտում իրենց ուժերը կչափեն Ջիբլարթարի թիմի հետ:

Ընտրական փուլի հաջորդ հանդիպումը Հայաստանի հավաքականը կանցկացնի հոկտեմբերի 11-ին՝ Երեւանում ընդունելով Սերբիայի թիմին, իսկ նոյեմբերի 14-ին Լիսաբոնում իր ուժերը կչափի Պորտուգալիայի հավաքականի հետ:

### ՄԱԴՐԻԴԻ «ՌԵԱԼԸ» ԵՎՐՈՊԱՅԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱԿՈՒՄԲ




Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիան Մադրիդի «Ռեալ»-ին ճանաչել է Եվրոպայի ֆուտբոլի 2014 թվականի լավագույն ակումբ:

2014թվականի մրցաշրջանում «Ռեալ»-ը շահել է Չեմպիոնների լիգան, Իսպանիայի ֆուտբոլի գավաթը եւ Սուպերգավաթը, իսկ ամենամեծ առաջընթացն արձանագրած ակումբ է ճանաչվել ավստրիական «Զալցբուրգ»-ը:

## ԱՌԱՋԻՆԸ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ



### ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

*Սեպտեմբերի 6-ին Մոսկվայում անցկացված եզրափակիչ հանդիպումների արդյունքներով, Վրաստանի հավաքականը դարձավ Ուրախների եւ հնարամիտների ակումբի պրեմիեր-լիգայի չեմպիոն:*

Նոր կարգավիճակը վրացական թիմին թույլ է տալիս ավտոմատորեն մասնակցել հաջորդ սեզոնի բարձրագույն լիգայի խաղերին:

ՈՒՀԱ-ի Վրաստանի թիմին ֆինանսավորում էր «Ռուսաստանի վրացիների միության» նախագահ Միխեիլ Խուբուտին:

2015 թվականի հունվարին Վրաստանի ՈՒՀԱ-ի հավաքականը կմասնակցի Սոչիում անցկացվելիք փառատոնին:

## ՅԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՄԱՐԶԻԿԸ

### ԿԱՐՏԻԿԱՄՑԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿԸ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳՐԻ



*Հաճախ կարելի է լսել, որ բարձրալեռ տարածաշրջաններում կյանքը կոփում է մարդու բնավորությունը: Սակայն, դա բավական չէ ճանաչված անձնավորություն դառնալու համար: Միայն մարդու ներքին տրամադրվածությունը, համապատասխան պայմաններն են հանգեցնում ցանկալի արդյունքի: Որպես օրինակ կարող է ծառայել բարձրալեռ Ջավախեթիի մարզական կյանքը:*

Բնականաբար, տեղական ռեսուրս-կենտրոնի, մյուս կազմակերպությունների ու առանձին հովանավորների բազմակողմ աջակցությունը նպաստում է զանգվածային սպորտի, հետեւաբար՝ առողջ ապրելաձեւի զարգացմանը: Սակայն այսօրվա դրությամբ, այս ընդհանուր զանգվածից առանձնանում է միայն մեկը՝ Ախալքալաքի շրջանի Կարտիկամ գյուղի բնակիչ Օթար Երանոսյանը, ով մտադիր է նվաճել օլիմպիական ուղեգիր, ինչը յուրաքանչյուր մարզիկի երազանքն է: Նրա առաջին մարզիչ, բռնցքամարտի շատ մրցաշարերի հաղթող Խաչիկ Էլիզբարյանը ոգեւորությամբ է պատմում Օթարի զարմանալի աշխատունակության եւ նպատակամղվածության մասին: Էլ չենք խոսում Կարտիկամ գյուղից բռնցքամարտի ասպարեզում նվաճումների «գլխավոր մեղավորի»՝ տեղի երիտասարդների հիանալի դաստիարակ, հեղինակավոր շատ մրցաշարերի հաղթող Ատոմ Էլիզբարյանի մասին: Նրա թիմը մեկ անգամ չէ, որ Վրաստանում, Հայաստանում, Ռուսաստանում անցկացված մրցաշարերում նկատելի է մատնել մրցակիցներին: Թիմի ծառայական ցուցակում ավելի քան 50 պատվավոր գավաթներ են, հարյուրավոր պատվոգրեր: «Ցավոք, ֆինանսական մշտական հիմնախնդիրները հաճախ են սանձահարում մեր ներուժը»,- ասաց բռնցքամարտիկ Աղասի Մկոյանը: Թեպետ որոշակի օգնություն, միեւնույն է, ստացվում է: Այսպես, «Ջավախքի կանչ» բարեգործական հիմնադրամը եւ Ախալքալաքի քաղաքապետարանը ֆինանսավորեցին կարտիկամցի պատանիների ուղեւորությունը Վրաստանի առաջնությանը, որտեղ մարզիկները նշանակալի հաջողության հասան, սակայն ոչ մի կերպ չկարողացան հավաքել Եվրոպայում անցկացվող նման մրցաշարի մասնակցության համար անհրաժեշտ գումարը:

Ամառային օրերին Կարտիկամի դպրոցի խաղադաշտը երբեք չի ազատվում, այնտեղ տարբեր տարիքի երեխաներ շարունակ մարզվում են: «Պատկերացրեք, նրանք բոլորը գործի իմացությամբ են հագնում բռնցքամարտիկի ձեռնոցները, հաջողությամբ այն օգտագործում ռինգում: Գյուղում բավականին լավ բռցքամարտի դահլիճ ունենք»,- հպարտությամբ ասում է Խաչիկ Էլիզբարյանը:

Բնականաբար, այդ ամենն իրականացվում է ծնողների, գյուղի վարչության ակտիվ աջակցությամբ, թեպետ կցանկայինք է'լ ավելի բարձր ակտիվություն, որպեսզի երիտասարդներն այդ հոգատարությունը կարողանային անմիջականորեն զգալ եւ ստանձնել ապագա էստաֆետը: Իսկ ներկա դրությամբ, Վրաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ, Լեհաստանում անցկացված առաջնության ոսկե մրցանակակիր, Ռեյկյավիկում անցկացված Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր, համաշխարհային այլ մրցաշարերի մասնակից Օթար Երանոսյանը պատրաստվում է առաջիկա մրցումներին: Նրան, երկրի ողջ հավաքականին, ինչպես նաեւ բոլոր այն պատանիներին, ովքեր չեն խուսափում մրցապայքարից, մաղթենք հաջողություններ:

*ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ*
*Կարտիկամ-Թբիլիսի*

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Հրեաներին հատուկ: 9.Գեղեցիկ, կլորիկ թռչուն: 10.Վահան, պաշտպանության միջոց: 11.Քաղաք Հայաստանում: 12.«Երկինքն ... ա» (Կոմիտաս): 14.Վրաստանում ծնված հայ բանաստեղծ (անունը): 16.... վիճակ: 18.Գետի մաս: 20.Խոհանոցային իր: 21.Մ.Գորկու հերոսներից: 25.Թանկարժեք քարերի կշռաչափ: 26.Միասին ծնված: 27.... զոնա: 28.Ոչ արագ, կամաց: 29.Վաղուցվա, շատ առաջվա: 31.Երիտասարդ, շնորհալի դերասան ... Լեւոնյան: 32.Քաղաք Հայաստանի Դաշնությունում: 34.Բախեմ, ..., բախի: 38.Պայթուցիկ զենք: 39.Վրաստանի ... տարածքներ: 41.«Դուն իմ եղեգն, ... եղեգն» (ժող. երգ): 42.Քաղաք Հայաստանի հարավում: 43.Վիրահայ լուսանկարիչ, գրող Ազատ Մանուկյան «... տարիներ»: 44.Նավթի չափման միավոր: 45.ԱՄՆ-ի տարադրամը: 46.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված Րաֆֆին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Սափրվել (բրբ.): 2.Բանաստեղծության տեսակ: 3.Բառագիրք: 4.Ոչ թեժ: 5.Պարսից շահ: 7.Թբիլիսիում ծնված դրամատուրգ Գ.Սունդուկյանի «... Պետրովիչը էն կինքումը»: 8.Քարերով առատ, շատ քարերով վայր: 13.Հայկական աղվոր պար: 14.Սպարապետ ... Մամիկոնյան: 15.Սկզբում, սկզբի փուլում: 17.Գուշակել, նախօրոք զգալ: 19.Քարերի վրա աճող, անարմատ բույս: 20.Հայրենիքի ...: 22.Հայկական, բնական ներկ՝ ... կարմիր: 23.Վրաց իշխան, Զաքարեի եղբայրը: 24.Բագրատունի թագավոր Աշոտ ...: 25.Ուկրաինական, Դոնի ...: 29.Արքունի, պալատական ծառայող: 30.Կապի միջոց: 31.Գիծ, խելառ: 33.Թանկարժեք քար: 35.Կոմպոզիտոր, երգի ստեղծող: 37.Մեխանիկորեն, ինքնուրույն: 39.Ամերիկահայ գրող Լեւոն-... Սյուրմելյան: 40.Անցք բացող:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Աչքածակ: 8.Առարկա: 9.Արկտիկա: 10.Ինկասո: 13.Խզբզանք: 17.Կածան: 18.Այրվածք: 21.Փափագ: 24.Չեզի: 25.Կարատե: 27.Պարկ: 29.Նամ: 31.Ադամանդ: 34.Վարգ: 35.Սենատ: 36.Քիթ: 37.Հայ: 38.Թուրման: 39.Մակալ: 42.Խաս: 43.Վանո: 44.Շախմատ: 45.Մատակ: 48.Դեղ: 49.Սուլուգունի: 50.Նախկին: 51.Մինին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Չարլզ: 3.Արտազ: 4.Արկան: 5.Պռունկ: 6.Ցրված: 7.Բարոն: 11.Կատար: 12.Սապատ: 14.Բարձ: 15.Աիազանգ: 16.Քոք: 19.Վեպ: 20.Ծիր: 21.Փալաս: 22.Փական: 23.Գերդտ: 26.Դավիթաշեն: 28.Կալանատուն: 30.Մաթուսաղա: 32.Մեղա: 33.Նանա: 37.Հավասի: 39.Մոմում: 40.Կատուն: 41.Կրկին: 46.Ագի: 47.Անի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445